



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր,
կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Կենսաբանություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աննա Ավագյան

Ուսումնական հաստատություն՝ Մխչյանի միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԹԵՄԱՆ՝ Բնապահպանությունը որպես մարդկության

գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

ՀԱՐՑԸ՝ Ինչպես վերլուծել և հասկանալ, այսօրվա բնապահպանական և
Էկոլոգիական խնդիրների առաջացման պատճառները

Ինչպես մշակել ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԴՊՐՈՑՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ՝ Աննա Ավագյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ էջ 3

ԳԼՈՒԽ 1. Ինչպես պահպանել բնապահպանական ռեսուրսները և ճիշտ բնօգտագործման մեթոդները _____ էջ 5

1.1 Բնապահպանություն հիմնախնդիրները Հայաստանում

ԳԼՈՒԽ 2. *Շրջակա* միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը *դպրոցում* _____ էջ 7

2.1 Բնապահպանական կրթությունը դպրեցում _____ էջ 10

Հետազոտություն՝ տարբեր դպրոցների կողմից կազմակերպված բնապահպանական միջոցառումները _____ էջ 13

Եզրակացություն _____ էջ 21

Գրականության
ցանկ _____ էջ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքը այն գիտության մասին է, որն ուսումնասիրում է կենդանի էակների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունն այն միջավայրի հետ, որտեղ նրանք բնակվում են: Դա կարող է

ամփոփվել այս հայեցակարգում: Այնուամենայնիվ, դա գիտության ամենաբարդ և ամբողջական ճյուղերից մեկն է: Բնապահպանության սահմանումը կարող է լինել շատ պարզ, բայց ուսումնասիրության օբյեկտը շատ բարդ է: Այլ կերպ ասած, այն նպատակ ունի ուսումնասիրել, թե ինչպես է շրջակա միջավայրը ազդում դրա բաշխման, առատության, կենսաբազմազանության, վարքի և տարբեր տեսակների միջև գոյություն ունեցող բոլոր փոխազդեցությունների և շրջակա միջավայրում առաջ բերվող փոփոխությունների վրա: Բնապահպանության ուսումնասիրության մակարդակները տարբերվում են. օրգանիզմները, բնակչությունը և բնակչության համայնքները կազմում են էկոհամակարգերը, Կան մի քանի ճյուղեր, որոնք նույնպես կենտրոնանում են ընդհանրապես կենսոլորտի ուսումնասիրության վրա: Բնապահպանություն ունեցող առաջին հետազոտողը Հեկկելն էր 1869 թվականին: Ողջ պատմության մեջ կարևոր բնապահպաններից են **Ramón Margalef and Eugene P. Odum**, Այս գիտնականները համարվում են ժամանակակից էկոլոգիայի հայրեր: Այնուամենայնիվ, մինչ էկոլոգիան իր ուրույն տարածքն ուներ, կային որոշ բնագետներ, որոնք նպաստում էին մեծ հայտնագործություններին և դիտարկումներին: Նրանցից ոմանք էին Բուֆոնի կոմսը, Ալեքսանդր Փոն Հումբոլդտը, Դարվինը, Լամարկը ...Բնության ողջ պատմությունը լի է հոգեբաններով, որոնք նկարագրում են աշխարհի գործերը: Գործնական նպատակներով կարող ենք ասել, որ էկոլոգիան կփորձի բացատրել ամբողջ բնության լիարժեք գործունեությունը:

Ֆրանսիացի մտածողներ, գերմանական փիլիսոփաներ Կանտն ու Հեգելը, Մարքսն ու Սպինոզան գլխավոր դերակատարումը տվել են խղճին: Նրանք խիղճը քննարկում էին, որպես շրջակա միջավայրի, բնության նկատմամբ մարդու վերաբերմունքի դրսևորում:

Եվ որքան հարուստ է մարդու ներաշխարհը, այնքան բազմակերպ է նրա վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Հասարակությունը կարիք ունի զարգացնել էկոլոգիական դաստիարակությունը և կուլտուրան «գլոբալ մտածելու և լոկալ գործելու» կարգախոսով:

Հետազոտության նպատակն է.

1. Իրականացնել հիմնահարցի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
2. Փորձել բացահայտել, թե ինչպե՞ս է իրականացվում բնապահպանական կրթությունը և դաստիարակությունը դպրոցում
3. Ուսումնասիրել, թե որքանո՞վ է բնապահպանության գաղափարը ճիշտ ընկալվում դպրոցահասակ երեխաների մոտ:
4. Կատարել հարցում, նրա արդյունքների հիման վրա պարզել հետազոտական աշխատանքի խնդիրները:

Գլուխ 1 Ինչպես պահպանել բնապահպանական ռեսուրսները և ճիշտ բնօգտագործման մեթոդները

1.1 Բնապահպանություն հիմնախնդիրները Հայաստանում

Ի սկզբանե մարդն օգտվել է բնությունից, օգտագործել է բնության ուժերն ու բարիքները հանուն իր գոյատևման ու բարօրության: Բնօգտագործում է կոչվում ընդհանրապես բնական ռեսուրսների և բնական պայմանների օգտագործումը մարդու կողմից: Բնօգտագործումը կարող է լինել ոչ ռացիոնալ և ռացիոնալ: Բնօգտագործումը համարվում է ոչ ռացիոնալ, եթե բնական ռեսուրսը և դրա օգտակար հատկությունները օգտագործվում են ոչ լրիվ չափով, և այդ ընթացքում էական վնաս է հասցվում միջավայրին, խախտվում է երկրահամակարգերի բնական հավասարակշռությունը: Հակառակ դրան, ռացիոնալ բնօգտագործման դեպքում բնական ռեսուրսը (անտառը, հանքանյութը, գետի ջուրը և այլն) և դրա օգտակար հատկությունները օգտագործվում են անմնացորդ, և միաժամանակ նվազագույն վնաս է հասցվում բնական միջավայրին: Մարդը բնությունն օգտագործում է աշխատանք կատարելու միջոցով, այսինքն՝ շրջակա բնության հետ մտնելով որոշակի հարաբերությունների մեջ: Մարդու աշխատանքային գործունեությունը բաղկացած է 3 տարրից, ա) մարդու նպատակահարմար գործունեություն կամ բուն աշխատանք, բ) աշխատանքի առարկա, որի վրա մարդը ներգործում է, գ) աշխատանքի միջոց (գործիքներ, մեքենաներ), որոնցով մարդը ներգործում է աշխատանքի առարկայի վրա:

Բնության այն տարրերը, որոնք դեռ չեն օգտագործվել մարդու կողմից և չեն վախել իրենց նախնական վիճակը, ինչպես օրինակ, անտառում աճող ծառի փայտանյութը, երկրի ընդերքում գտնվող քարածուխը, տուֆաքարը, նավթը կամ չմշակվող հողը, գետում հոսող ջուրը, կոչվում են աշխատանքի առաջնային առարկաներ:

Երբ բնության այդ տարրերն արդեն ընդգրկված են արտադրության ոլորտ, երբ ծառն արդեն հատվել ու սղոցվել է, երբ տուֆի բեկորը հանքից հանվել է, տաշվել ու դարձել պատրաստի որմնաքար, երկաթաքարը ձուլվել է և դարձել պողպատ, հոսող ջուրը սկսել է էլեկտրաէներգիա արտադրել կամ ջրել դաշտը, հողը մշակվել է ու բերք է տալիս, դառնում են աշխատանքի երկրորդային առարկաներ:

ՀՀ-ում:

Վերջին տասնամյակներում ձևավորվել և բուռն զարգացում է ապրել գիտությունների մի ամբողջ համակարգ՝ Երկիր մոլորակի բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ: Հայաստանում բնաշխարհի վրա ներգործության հետևանքով փոփոխությունների մակարդակը համապատասխանում է բարձր քաղաքակենտրոնացված (ուրբանացված) և զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներին ու նկատելիորեն բարձր է հարևան երկրներից: Հանրապետության բնակչության 96%-ը կենտրոնացած է մինչև 2000 մ/բարձրությամբ բնակավայրերում, որը կազմում է երկրի տարածքի 60%-ը, որտեղ բնակչության խտությունը 171 մարդ/կմ² է, բնակավայրերի խտությունը՝ մոտ 6 բնակավայր 100 կմ² վրա, ճանապարհային (երկաթուղային և ավտոմոբիլային) ցանցի խտությունը՝ 0,85 կմ/կմ²:

Հանրապետության տարածքի 12,7%-ն անտառածածկ է, իսկ 46,8%-ն ընդգրկված է գյուղատնտեսական օգտագործման մեջ:

Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել լճաքարի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողուն աշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը:

Արդյունաբերական բնօգտագործում Հայաստանում մեծ մասշտաբների է հասել նաև արդյունաբերական բնօգտագործումը: 1920-ականների 2 տասնյակ փոքր ու միջին ձեռնարկությունների փոխարեն ներկայումս ավելի քան 200 բնակավայրում կան արդյունաբերական նձեռնարկություններ, որոնք տեղադրված են մինչև 2000-2100 մ բարձրության լանդշաֆտային տարածքներում: Բնական պաշարների օգտագործումն ու դրանից ստացվող համախառն արտադրանքն անել են հարյուրապատիկ՝ հիմնականում էքստենսիվ զարգացման ու բնական պաշարների անխնա շահագործման հաշվին, իսկ էկոլոգիական խնդիրները չեն կարևորվել: Հետևանքը եղել է այն, որ օտարվել են նոր հողատարածքներ, դեգրադացվել բնական լանդշաֆտներ, աղտոտվել են հողերը, օդային և ջրային ավազանները:

Ներկայումս (2006) արդյունաբերական նձեռնարկությունները գործում են իրենց հզորությունների 10-30%-ի չափով, որի հետևանքով մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը կտրուկ նվազել է և կազմում է տարեկան 15-20 հզ. տ:

Օդային ու ջրային ավազաններ

Աղտոտված են նաև օդային ու ջրային ավազանները: Կան ջրավազաններ (օրինակ՝ Դեբեդ և Ողջի գետերի), որոնց ջրային բուսական ու կենդանական աշխարհները խիստ աղքատացել են գետը թափվող արդյունաբերական ջրերից: Իրենց բացասական ազդեցությամբ աչքի են ընկնում արդյունաբերության հատկապես մետաղաձուլական և քիմիական ճյուղերը: Չնայած վերջին շրջանում դրանց ծավալները զգալիորեն նվազել են, սակայն երկրի լանդշաֆտներին ու կենսաբազմազանությանը հասցրած վնասը զգալի է:

Ցեմենտի արտադրություն

Կենսաբազմազանության վրա զգալի բացասական ազդեցություն է թողնում ցեմենտի արտադրությունը: Հրազդան և Արարատ քաղաքներն ու դրանց մերձակա տարածքները չափազանց աղտոտված են ցեմենտի փոշով, որն ազդում է հատկապես ագրոկենսաբազմազանության ու անտառային կենսահամակարգի վրա: Բնական լանդշաֆտների վրա գնալով աճում է նաև ծավալվող շինարարության բացասական ազդեցությունը:

Չրոսաշրջություն

Բնաշխարհին զգալի վնաս են հասցնում նաև անկազմակերպ Չրոսաշրջությունը, բուսական պաշարների (դեղաբույսեր, սնկեր և այլն) չկարգավորված հավաքն ու օգտագործումը, որոնց հետևանքով զանգվածաբար ոչնչանում են բուսական ու կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ, շրջակա միջավայրն աղտոտվում է կենցաղային աղբով և այլն: Այս խնդիրների լուծման ամենաարդյունավետ եղանակներից մեկը բնակչության էկոլոգիական կրթության ու դաստիարակության բարելավումն է, մարդկանց մեջ բնական միջավայրի հանդեպ հոգածության վերաբերմունքի մշակումը:

ԳԼՈՒԽ 2. Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարությունը դպրոցում

Մույն Ռազմավարությունում մանրամասն դիտարկվել են շրջակա միջավայրի բաղադրիչներ հանդիսացող հողերը, կենսաբազմազանությունը, ներառյալ՝ անտառները և բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ-ներ), ջրային ռեսուրսները, մթնոլորտը, իսկ ընդերքում պարփակված օգտակար հանածո հանդիսացող բնական ռեսուրսների մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի նիստի 21-րդ կետով ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման հայեցակարգը, համաձայն որի նախատեսված հիմնախնդիրների լուծման համար պետք է իրականացվի ախտորոշիչ ուսումնասիրություններ ինչի հիման վրա կմշակվի ռազմավարական փաստաթուղթ՝ ներառելով ոլորտի կայուն զարգացման համար խոչընդոտ հանդիսացող խնդիրների լուծման մանրամասն ուղղությունները, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտի բարեփոխումներին ուղղված միջոցառումները, ֆինանսական գնահատականները և ակնկալվող արդյունքները: Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումները ներկայացված են ըստ բաղադրիչների: Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացման նպատակն՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող, ծառայությունների որակի բարձրացում վարչարարության պարզեցումը, կայուն զարգացման սկզբունքների ներդրումը շրջակա միջավայրի պահպանության բոլոր ոլորտներում և դրանց համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումները՝ հակասությունների և կրկնությունների վերացնելու մասով:

ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝

Բնապահպանները ահազանգում են Հայաստանում բնապահպանական բազմաթիվ խնդիրների մասին. Թեղուտի, Քաջարանի, Ջերմուկի հանքերի շահագործում, անտառների ոչնչացում, Երևանի անապատացում և այլն: Արդյոք այս խնդիրները տեղ գտնել են կուսակցությունների նախընտրական ծրագրերում, և խորհրդարան մտնելու համար պայքարող ուժերն ինչպե՞ս են պատկերացնում բնապահպանության ոլորտում առկա խնդիրների լուծումները:

1. Մարդու ազդեցությունը բնական համակարգերի վրա

Մարդու գործունեության տևական և ակտիվ ներգործության հետևանքով տեղի են ունենում բնական միջավայրի աղքատացում և որակազրկում, բույսերի և կենդանիների բազմաթիվ տեսակներ հայտնվել են անհետացման եզրին: Այդ երևույթը հատկապես կործանարար ազդեցություն է թողնում տարածման նեղ արեալ ունեցող կենդանատեսակների վրա: Ներկայումս վտանգավոր սահմանագծի է հասել Արաքսի հովտի եզակի, խիստ յուրահատուկ սողունաշխարհը (հերպետոֆաունան): Սևանի ավազանից գրեթե անհետացել է խայտաբղետ մողեսի ենթատեսակի բնաշխարհիկ պոպուլացիան, որը միակն է Կովկասի բարձրադիր վայրերում: Նույն վիճակում է նաև փոքրասիական մողեսը: Վերջին 50 տարիների ընթացքում կիսաանապատային և տափաստանային տարածքների ակտիվ յուրացման հետևանքով իրենց բնադրավայրերից դուրս են մղվել զանազան թռչուններ, մեծ, փոքր և գեղանի արոսները, սևափոր դոլոնը, կանաչ մեղվակերը: Տեղի է ունեցել ջրանհեղացի էկոհամակարգերի ոչնչացում: Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով մերկացել են առափնյա ժայռերն ու մերձափնյա հատվածը, չորացել շրջակա ճահճուտները, վերացել են Սևանի իշխանի ձվադրավայրերի հիմնական մասը, բազմաթիվ ջրլող ու չվող թռչունների, կաթնասունների տեսակները: Սևանա և Արփի (անցյալում նաև Գիլլի) լճերն անփոխարինելի դեր ունեն ոչ միայն հանրապետության ճահճային թռչունների պահպանության, այլև հարևան երկրների ջրային ավազանների հետ օրգանական կապի պահպանման առումով, որով ապահովվում է հանրապետության տարածքում 145 տեսակ ջրլող և առափնյա թռչնատեսակների գոյությունը:

2. Անտառների հատում

Անտառների անկանոն հատումների պատճառով շատ կաթնասուններ (օրինակ՝ կզաքիսը, հնդկական մացառախոզը, գորշ արջը, մուֆլոնը, անտառային կատուն և այլն) լքել են իրենց բնական կենսավայրերը:

Հայաստանում անտառները պետական սեփականություն են, և պետությունն է ապահովում անտառների պահպանությունը, օգտագործումը, վերականգնումն ու նոր անտառային տարածքների ստեղծումը: Օրենքով անտառհատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և խնամքի նպատակներով:

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը: Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գանձ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում սխեմայով:

3. Արդյունաբերական բնօգտագործում

Հայաստանում մեծ մասշտաբների է հասել նաև արդյունաբերական բնօգտագործումը: 1920-ականների 2 տասնյակ փոքր ու միջին ձեռնարկությունների փոխարեն ներկայումս ավելի քան 200 բնակավայրում կան արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տեղադրված են մինչև 2000-2100 մ բարձրության լանդշաֆտային տարածքներում: Բնական պաշարների օգտագործումն ու դրանից ստացվող համախառն արտադրանքն անել են հարյուրապատիկ՝ հիմնականում էքստենսիվ զարգացման ու բնական պաշարների անխնա շահագործման հաշվին, իսկ էկոլոգիական խնդիրները չեն կարևորվել: Հետևանքը եղել է այն, որ օտարվել են նոր հողատարածքներ, դեգրադացվել բնական լանդշաֆտներ, աղտոտվել են հողերը, օդային և ջրային ավազանները:

Սևանա լճի հիմնախնդիրը

Մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը Սևանա լիճն ուներ բնական էկոհավասարակշռություն, ջրի մակարդակի (ծովի մակարդակից բարձրությունը մոտ 1916 մ) բնական տատանմամբ: Լճին բնորոշ էին օլիգոտրոֆ (*սևվում են մթնոլորտային տեղումներով, հանքանյութեր քիչ են պարունակում*) լճերի հիմնական հատկանիշները՝ ջրի բարձր լուսաթափանցելիություն (միջինը 14 մ), ջրում լուծված թթվածնի բարձր պարունակություն (6.0 մգ/լ-ից ոչ պակաս), պլանկտոնի ցածր պարունակություն և բարձրորակ մաքուր ջրերին բնորոշ սաղմոնազգի ձկների (Սևանի իշխան) օպտիմալ ձկնապաշար: Սակայն սկսած 30-ական թվականներից երկրի էներգետիկ կարիքները հոգալու, Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադը ջրով ապահովելու և ոռոգովի հողատարածքները ընդլայնելու նպատակով Հրազդան գետի միջոցով սկսվեց ջրի լրացուցիչ չափաքանակի բացթողում, որի արդյունքում լճի մակարդակը իջավ (մինչև 20,2 մ-ով), միջին խորությունը պակասեց՝ 41,3 մ-ից մինչև 26,5 մ, ջրի ծավալը 58,5 մլրդ մ³-ից կրճատվեց մինչև 32 մլրդ մ³: Սևանա լճի մակարդակի իջեցմանը զուգընթաց լճում արձանագրվեցին բացասական երևույթներ, հատկապես ինտենսիվացան էվտրոֆացման (ճահճացման) պրոցեսները: Լճի էկոհամակարգի վերականգնման և պահպանման նպատակով ձեռնարկվեցին մի շարք մեծածավալ միջոցառումներ: Որոշվեց լճի մակարդակը բարձրացնել 6,5 մ: Կառուցվեցին Արփա-Սևան, ապա Որոտան-Արփա ջրատար թունելները: Հիմնականում 2002 թվականից սկսած կրճատվեցին ջրբացթողումների ծավալները: Արդյունքում լճի մակարդակը մոտ 3,5 մ բարձրացավ: Սակայն ներկայումս շարունակում է խախտված մնալ լճի բնական էկոհավասարակշռությունը, այն գտնվում է անկայուն վիճակում:

Ընդհանուր առմամբ լճի էկոհամակարգի վրա ճնշման գործոններն են.

- լճի մակարդակի ցածր լինելը

- ջրածածկ անտառների քայքայումը և սնուցիչ նյութերի տարալուծումն ու տարածումը լճում
- ավազանի բնակավայրերի և ձեռնարկությունների կոմունալ կենցաղային կեղտաջրերի անարգել հոսքը դեպի լիճ
- ավազանի բնակավայրերի և ձեռնարկությունների կենցաղային աղբի և թափոնների ներհոսքը դեպի լիճ
- ավազանի գյուղատնտեսությունն ու անասնապահությունը
- ավազանի հանքարդյունաբերությունը
- ավազանի գետերի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երը

Բնապահպանական կրթությունը` անընդմեջ գործընթաց է` նպատակաուղղված անձի բնապահպանական գիտելիքների ուսուցմանը, բնապահպանական դաստիարակությանը, բնապահպանական մշակույթի արմատավորմանը, շրջակա միջավայրի պահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը:

Բնապահպանական դաստիարակություն` բնապահպանության մշակույթի հիմքը և անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ` բնության հետ փոխներգործության ընթացքում:

Բնապահպանական գիտելիք` հասարակական իմացության այն ոլորտն է, որը նպատակաուղղված է շրջահայաց բնօգտագործմանն ու մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը:

Բնապահպանական մշակույթ` մարդու և բնության ներդաշնակ փոխազդեցության զարգացման մակարդակ, որը բնութագրվում է մարդկության կողմից էկոլոգիական հիմնախնդիրների առաջնահերթ լուծման գիտակցությամբ ու գիտական հիմնավորվածությամբ, ինչը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը, սերունդների համերաշխությանը` օգտագործելով բնության հնարավորությունները:

Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական անընդմեջ կրթության օրենքի նպատակն է`

ա) ապահովել մարդու և հասարակության անընդմեջ, համալիր, միասնական բնապահպանական գիտելիքների մատուցումը.

բ) նպաստել բնապահպանական դաստիարակության և մշակույթի ձևավորմանը, մարդու, հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակեցմանը, էկոլոգիապես գրագետ անձի ձևավորմանը:

2.1 Բնապահպանական կրթությունը դպրեցում

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար:

Բնապահպանական կրթության ծրագիրը սովորողների համար հանդիսանում է կոնկրետ մարմնավորում, որը էկոլոգիական դաստիարակության հետ կապված ուսումնական պրակտիկան է, որն իրականանում է դպրոցներում: Բացի ծրագրի բովանդակության հիմնական հասկացություններից և արժեքներից, ներկայիս մոդերն արժեքավորվում է նաև առաջնային գործունեությամբ՝ կրթական վիճակ, լավագույն փորձ, տեխնիկա, ձևեր, գործիքներ, արտադրական տեխնոլոգիաների առանձնահատկություններ:

Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ : Կազմակերպման յուրաքանչյուր ձև սովորողների հետ ուսուցման գործընթացում խթան է հանդիսանում, զարգացնում տարբեր տեսակի ճանաչողական գործունեություններ: Այլ աղբյուրներից տեղեկությունները թույլ են տալիս կուտակել և բացահայտել խնդրի էությունը, ստեղծականությունը, թույլ են տալիս, որպեսզի անհատը իրական ներդրում ունենա ուսումնասիրության և էկոհամակարգերի խթանման գործընթացում:

Բնապահպանական հայեցակարգի ձևավորումը դպրոցներում, սովորողների մոտ «Մարդը և աշխարհը» գաղափարախոսության մեջ տալիս է ուժեղացված էկոլոգիական հասկացություններ, հստակեցնում է զգալի թվով վառ ու մատչելի օրինակներով: Սկսած «Ես և շրջակա աշխարհը» առարկայի առաջին դասից՝ կապ է ստեղծվում հասարակության և բնության միջև, որը դառնում է անբաժանելի օրգանական ամբողջություն, իսկ ինքը՝ սովորողը, այդ ամբողջության մի մասնիկը: Սա հնարավորություն է տալիս վաղ հասակից ստեղծել մանկական ամբողջական բարոյական և էկոլոգիական գաղափարներով անհատ, որը պատկերացնում է մարդու ազդեցությունը շրջակա միջավայրի հանդեպ՝ թե՛ դրական և թե՛ բացասական իմաստով:

Երեխաները ստանում են հատուկ գիտելիքներ բույսերի և կենդանիների մասին: Սովորողների համար մատչելի կերպով պետք է բացահայտվեն հակասությունները առկա հասարակության և բնության միջև: Սովորողներին պետք է ծանոթացնել իրական բնապահպանության առջև ծառայած խնդիրներին: Ուսումնասիրելով «Էկոլոգիա» առարկան իր խորությամբ՝ անհրաժեշտ է զարգացնել միջառարկայական կապը կենսաբանություն և աշխարհագրություն առարկաների միջև, տալ ճիշտ ձևակերպում բնապահպանության, էկոլոգիական շղթայի (պարենային կապը օրգանիզմների), բնապահպանական, էկոլոգիական աղետների մասին:

Դիմելով պատմության օգնությանը (հասարակություն-բնություն ներդաշնակ փոխազդեցությունը տեսականորեն հիմնավորելու համար), ուսուցիչը ներկայացնում է գիտական պատճառներ բնությունը պահպանելու, ինչպես կոնկրետ երկրի, այնպես էլ աշխարհի մակարդակով: Իմացական գործունեությունը խթանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է բարոյական որոշում կատարել, և այդ իրավիճակները նպաստում են սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Ակտիվանում է նաև ձգտումը՝ գեղագիտական զգացմունքները ստեղծագործական միջոցներով արտահայտելու (նկարչության, բանաստեղծության միջոցով): Արվեստին բնորոշ սինթետիկ մոտեցումը և զգայականությունը դեպի իրականությունը հատկապես կարևոր են բնության պահպանման շարժառիթները զարգացնելու համար:

Անհրաժեշտ է նաև ուսուցանել ամենահարմար մեթոդները՝ վերլուծելու և կարևորելու բնապահպանական արժեքները, շահերն ու կարիքները, նկարչության փորձերի և բնապահպանական դիտարկումների, դասավանդողի հետզրույցների, փաստերի, գործիչների կարծիքների միջև համեմատություն անցկացնելով՝ կառուցել սեփական վերաբերմունք խնդիրների նկատմամբ:

Բնապահպանական ուղղվածություն տվող ոչ ավանդական դասաժամերի կազմակերպման ձևերի թվում են դասը որպես տոն և թեմատիկ դասերը («Անտառի տոն», «Ծառի ու ծաղկի տոն», «Պահպանիր բնությունը» միջոցառումներ): Այսպիսի դասերը սովորողների մեջ ձևավորում են ակտիվ քաղաքացիական դիրքորոշում հայրենի բնության նկատմամբ:

Երեխաներին դուր են գալիս զանազան մրցույթները: Խաղային մրցույթները համադրվում են ճամփորդությունների և արշավների հետ: Ցածր դասարանի աշակերտները սովորում են խնամել տնային բույսերը, հետազոտում են լանդշաֆտային դիզայնի հնարավորությունները:

Բնապահպանական խնդիրները լուծելիս սովորողներն իրենց անկախ գործունեությամբ որոշակի մեթոդներ են ձեռք բերում, որոնք խրախուսում են նրանց գործունեությունը, նոր գաղափարների շուրջ ծնված լուծումներ ու բացահայտումներ են գտնում, զարգացնում են բանավիճելու մեթոդիկան, որոնք էլ իրենց հերթին նպաստում են անհատական հարաբերությունների ձևավորմանը, սովորողների խնդիրների, տեղական ծանոթ, իրական

միջավայրի պայմանների համար հնարավոր լուծումներ որոնելու, գտնելու: Դասի արդյունավետությունը աճում է մուլտիմեդիային պրեզենտացիաների շնորհիվ, որոնք ուղեկցում են, լուսաբանում ուսուցչի կամ սովորողի բացատրությունները:

Հետազոտություն՝ տարբեր դպրոցների կողմից կազմակերպված բնապահպանական միջոցառումները

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Հարգելի մասնակից հետազոտական աշխատանքի շրջանակներում անցկացվում է սոցիոլոգիական հարցում, որի նպատակն է ուսումնասիրել բնապահպանական գիտելիքները

1. Ինչու՞ խոսել բնապահպանությունից
 - ա) կարևոր է
 - բ) անկարևոր է
 - գ) բնությունը կործանվում է
 - դ) ուղղակի մարդկանց հետաքրքիր է
2. Հեռուստացույցով հաճախ եք լսում բնապահպանական հիմնախնդիրների մասին
 - ա) այո շատ հաճախ
 - բ) ոչ հիմնականում
 - գ) հեռուստացույց չեմ դիտում
3. Ինչպիսի՞ վտանգ են ներկայացնում մարդկության համար բնածին աղետները
 - ա) դրանք շատ վտանգավոր են
 - բ) միշտ էլ եղել են և մարդկությանը վնաս չեն պատճառել
 - գ) կարելի է միջոցներ ձեռնարկել պաշտպանվելու համար
4. Աղբը թափել, թե՞ հավաքել
 - ա) միանշանակ հավաքել
 - բ) հնարավորության դեպքում
 - գ) աղբը վնասակար չէ բնությանը
5. Աղբը տեսակավորել թե՞ ոչ
 - ա) անհրաժեշտ չէ
 - բ) պարտադիր է
 - գ) ոչինչ չգիտեմ այդ մասին
6. Ծառատունկի նպատակը
 1. Կանաչ մասի ավելացում
 2. ճանապարհների նեղացում

7. Խնայե՞լ ջուրը

- ա. միանշանակ
- բ. պետք չէ խնայել միևնույն է վերականգնվում է
- գ. միայն խիստ անհրաժեշտ դեպքերում

8. Ինչպիսի՞ միջավայրում կցականայիր ապրել

- ա. բուսականությունով հարուստ
- բ. բարձրահարկ շենքերում
- գ. ինձ համար միևնույն է

9. Որտե՞ղ եք ավելի հաճախ լսում բնությունը պահպանելու մասին

- ա. տանը
- բ. դպրոցում
- գ. սոցիալական կայքերում

Սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծություն և ամփոփում

Հետազոտության ընթացքում կազմված հարցաթերթիկն ուղղված էր դպրոցահասակ երեխաների շրջանում բնապահպանության մասին իրազեկվածության ստուգման և բնապահպանական միջոցառումների մասնակցության հաճախականության մասնակցությանը: Բոլորը, ովքեր մասնակցում էին սոցիոլոգիական հարցմանը, մեծ ուրախությամբ և պատրաստակամությամբ էին պատասխանում

հարցերին: Հետազոտությանը մասնակցել էին դպրոցահասակ երեխաներ՝ 8-12 դասարանի 100 աշակերտներ:


Արդյունքներն ավելի տեսանելի դարձնելու համար ստորև ներկայացնում են համապատասխան գծապատկերները:

Գծապատկեր 1

Առաջին հարցին սովորողները պատասխանել են հետևյալ կերպ.


- Ինչու՞ է ամեն տեղ խոսվում բնությունը պահպանելու մասին ա) կարևոր է- 30%
- բ) անկարևոր է- 20%
- գ) բնությունը կործանվում է- 30%
- դ) ուղղակի մարդկանց հետաքրքիր է -20%

Ինչու՞ խոսել բնապահպանությունից



Երկրորդ հարցն ուղղված էր բացահայտելու, թե հաճախակի են լսում բնապահպանության մասին:

Հեռուստացույցով հաճախ եք լսում բնապահպանական հիմնախնդիրների մասին




Գծապատկեր 2

Հետազոտության նպատակից ելնելով փորձում էի կապ գտնել տեխնոլոգիական միջոցների, աշակերտների հետաքրքրվածության, և դրանում դպրոցի դերի մասին: Ինչպիսի՞ վտանգ են ներկայացնում մարդկության համար բնածին աղետները հարցին սովորողների 70 % պատասխանել էր, որ դրանք շատ վտանգավոր են: 20%-ը միշտ էլ եղել են և մարդկությանը վնաս չեն պատճառել, և 10%-ը կարելի է միջոցներ ձեռնարկել պաշտպանվելու համար:


Ինչպիսի՞ վտանգ են ներկայացնում մարդկության համար բնածին աղետները

Գծապատկեր 3



Հարցման թերթիկները նայելուց հասկանում էի մի բան: Կա առաջընթաց սովորողների մոտ բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման, բայց դեռ շատ անելիք կա և այդ գործում կարևոր է նաև ընտանիքի դերը: Հարցին աղբը թափել, թե՛ հավաքել՝ սովորողների 80%-ը պատասխանել էր միանշանակ հավաքել, 15%-ը հնարավորության դեպքում, 5%-ը աղբը վնասակար չէ բնությանը:


Աղբը թափել, թե՛ հավաքել



Գծապատկեր 4

Այս հարցի պատասխանները դիտարկելուց հետո համոզմունքս ավելի մեծացավ մեր պատրաստակամ և խելացի սրունդի մասին: Իրականում եթե որոշները նույնիսկ պատասխանել էին այլ կերպ, բայց վարվում են այլ ձևով, միևնույն է մտածում եմ, որ այդ թվաքանակը մեծ չի լինի և ուղղակի շրջապատում այդ աշակերտները կգտնեն իրենց ճիշտ ձևով: Հարցին՝ աղբը տեսակավորել թե՛ ոչ սովորողների 20%-ը՝ անհրաժեշտ չէ, 75%-ը՝ պարտադիր է, 5%-ը՝ ոչինչ չգիտեմ այդ մասին: Պատասխանները ինձ համար հասկանալի էին, քանի որ տեղեկացված էին աղբի տեսակաորման մասին:


Աղբը տեսակավորել թե՛ ոչ



Գծապատկեր 5

Հարցին, թե որքա՞ն հաճախ եք մասնակցում ծառատունկի՝ սովորողների 15%-ը պատասխանել էր երբեմն, 50%-ը՝ միշտ, 35%-ը՝ հաճախ է պատահում: Եվ այն աշակերտները որոնք մասնակցում էին հաճախ ծառատունկի, նշել էին, որ իրենց ծնողների հետ այգեգործական աշխատանքների ժամանակ են կատարում ծառատունկ:


Գծապատկեր 6



Հարցին, թե ինչպե՞ղ ջուրը, պատասխանները ավելի քան վտանգավոր էին, որովհետև սովորողների գրեթե կեսը մտածում էր, ինչպես խնայողաբար օգտագործել ջուրը: Նույնիսկ սովորողներից ասաց , որ իր սենյակի բույսերը խմելու ջրով է ջրում , կարելի է թե ոչ: Սովորողների 70%-ը պատասխանել էր միանշանակ, 10%-ը՝ պետք չէ խնայել միևնույն է վերականգնվում է, 20%-ը՝ միայն խիստ անհրաժեշտ դեպքերում:


Գծապատկեր 7

Խնայե՞լ ջուրը



Հարցին, թե ինչպիսի՞ միջավայրում կցականայիր ապրել, սովորողների 50%-ը՝ բուսականությունով հարուստ միջավայրում, իսկ 35%-ը բարձրահարկ շենքերում: Ինձ համար միևնույն է պատասխանը 15% :


Ինչպիսի՞ միջավայրում կցականայիր ապրել



Գծապատկեր 8

Եվ վերջին հարցին, թե որտե՞ղ եք ավելի հանախ լսում բնությունը պահպանելու մասին: Ես չգարմացա պատասխաններից, որովհետև մտացծում էի, որ ավել շատ թվով աշակերտներ կպատասխանեն դպրոցում, որովհետև դեռ տարրական դասարաններում ուսուցիչները խոսում են և մեկնաբանում բնությունը կարևոր արժեքի մասին: Սովորողների 75%-ը պատասխանել էր՝ դպրոցում, 20%-ը՝ տանը, 5%-ը՝ սոցիալական կայքերում:

Որտե՞ղ եք ավելի հաճախ լսում բնությունը պահպանելու մասին



Գծապատկեր 9

Այսպիսով, ամփոփելով սոցիոլոգիական հարցման արդյունքների վերլուծությունը, պարզ է դառնում, որ սովորողները հիմնականում պատկերացնում են, բնության կարևոր արժեք պահպանման մասին, բայց դրան գնալու և հասնելու ճանապարհները նրանց մոտ աղավաղված են կամ ոչ ամբողջական ձևավորված: Ուստի կարևորվում է յուրաքանչյուր երեխայի մեջ էկոլոգիական դաստիարակության ընտանիքի, դպրոցի և հասարակության դերը: Եվ իհարկե դրա ամենամեծ բաժինը կատարելու է ուսումնական հաստատությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի մարդկության առջև ծառայած խնդիրների բարձրաձայնման, դրանց լուծման ուղիներ գտնելու, բնության հանդեպ հոգատար և պատասխանատու վերաբերմունքի ձևավորման մեջ: Մեր երկրում բնապահպանական մի շարք խնդիրներ կան, կապված անտառային մակերեսի կրճատման, թափոնային արտադրության, ոռոգման ջրերի պակասի, հողերի էրոզիայի, մթնոլորտի աղտոտվածության հետ: Այդ խնդիրները մեր հասարակությունը ճշգրիտ կպատկերացնի, երբ ավելի հստակ տեղեկատվություն ունենա՝ էկոհամակարգերի քայքայման, անապատացման, կլիմայի գոյքալ փոփոխության հիմախնդիրների մասին: Գրականության մանրամասն ուսումնասիրությունից և իմ կողմից կատարված հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել

Մարդը երբեք բնական ռեսուրսների սպառվելուց վախենալու հիմք չի ունենա, եթե մշտապես իր աշխատանքի որոշ մասը ծախսի բնական ռեսուրսների վերականգնման վրա, բնության հարստությունները օգտագործի խելամտորեն:

Բնության պահպանության էությունը ինքնավերականգնման հատկության պահպանումն է: Եթե ինքնավերականգնումը դադարում է, ապա նշանակում է բնությունը ավերվում է, դադարում են նրա շահագործման հնարավորությունները մարդու կողմից: Ամեն մի բիոգեոցենոզ ունի իր բնական, դարերի ընթացքում ստեղծված օպտիմալ կառուցվածքը, հետևապես մարդը իր տնտեսական գործունեության ընթացքում չպետք է խախտի այն, այլապես նա կարող է կործանել բնությունը:

Բնությունը գեղեցկացնում ու բազմերանգ է դարձնում մարդու կյանքը: Անտառներում դաշտերում, մարգագետիններում, ջրերում ու հովիտներում, լեռներում մարդը կարող է լավ հանգստանալ, պայմաններ գտնել իր ուժն ու առողջությունը վերականգնելու համար:

Այսպիսով՝ պարզ է, որ ձևավորելով բնապահպանությունը կրթության միջոցով, հնարավոր է լուծել մարդկության առջև ծառայած և նրան հուզող և մտահոգող շատ խնդիրներ: Իր գիտելիքները հարստացնելով, բնության ու հասարակության:

Պահպանել բնությունը նշանակում է
պաշտպանել հայրենիքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://www.hamakarg.am/?p=1490> Բնապահպանական հիմնախնդիրների մասին
Հեղինակ՝ Լուսինե Մուրադյան
2. Լ. Մելքունյան, Մ. Գալստյան «Բնապահպանության հիմունքներ» Երևան 2021 թ.
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
3. <https://ecocenter.am/hy/events/> Էկոլոգիկենտրոն
4. <https://tekahakobyan.wordpress.com/>
5. https://asyashahinyan.files.wordpress.com/2014/05/ara_mountain_aragatsotn_armenia.jpg
6. <https://www.ecolur.org/files/uploads/pdf/fifteenarm.pdf>